## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2020թվականի N 7

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը.

1. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին:

2. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական տարեկան բյուջեով իրականացվող Հայաստանի Հանրապետության համայնքներին տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2020թվականի N 8

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը նիստի մասնակիցներին ներկայացրեց 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը: Նշեց, որ հողի հարկի և գույքահարկի գանձումների ցածր ցուցանիշները պայմանավորված է նրանով, որ հարկատուները հիմնականում իրենց վճարումները կատարում են տարվա վերջին ամիսներին:

Առաջնորդվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին ընդունել ի գիտություն: /Հաղորդումը կցվում է/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

# Հաշվետվություն

## Դիմիտրով համայնքի 2020թ.-ի բյուջեի 1-ին եռամսյակի եկամուտների կատարման վերաբերյալ

| Եկամտատեսակ | Տարվա ճշտված պլան | Կատարո-ղական | Փաստացին պլանի նկատմամբ |
|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 35,402,500.00 | 6,884,935.40 | 19.45% |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 431,000.00 | 6,142.40 | 1.43% |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 3,500,000.00 | 193,798.00 | 5.54% |
| Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 4,000,000.00 | 251,843.00 | 6.30% |
| Տեղական տուրքեր | 285,000.00 | 69,000.00 | 24.21% |
| Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | 50,000.00 | 15,000.00 | 30.00% |
| Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 5,000.00 | 0.00 | 0.00% |
| Համայնքի վարչ. տարածքում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար | 18,000.00 | 0.00 | 0.00% |
| Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | 212,000.00 | 54,000.00 | 25.47% |
| 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 25,138,500.00 | 6,284,600.00 | 25.00% |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 25,138,500.00 | 6,284,600.00 | 25.00% |
| Գույքի վարձակալությունից եկամուտներ | 329,000.00 | 24,000.00 | 7.29% |
| Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 85,000.00 | 0.00 | 0.00% |
| Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | 244,000.00 | 24,000.00 | 9.84% |
| Վարչական գանձումներ | 1,719,000.00 | 55,552.00 | 3.23% |
| Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | 15,000.00 | 7,500.00 | 50.00% |
| Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | 1,654,000.00 | 48,052.00 | 2.91% |
| Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | 50,000.00 | 0.00 | 0.00% |

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով

Առաջատար մասնագետ /հաշվապահ/ Հ. Թադևոսյան

## Հաշվետվություն

## Դիմիտրով համայնքի 2020թ.-ի բյուջեի 1-ին եռամսյակի ծախսերի կատարման վերաբերյալ

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Բաժին | Խումբ | Դաս | Տարվա պլան | Փաստացի ծախս | Ծախսը պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | X | X | X | 35,402,500.00 | 6,798,856.00 | 19.20% |
| Կառավարման մարմնի պահպանում | 1 | 1 | 1 | 23,402,000.00 | 5,564,638.80 | 23.78% |
| Ճանապարհային տրանսպորտ | 4 | 5 | 1 | 150,000.00 | 0.00 | 0.00% |
| Աղբահանում | 5 | 1 | 1 | 2,000,000.00 | 0.00 | 0.00% |
| Փողոցների լուսավորում | 6 | 4 | 1 | 1,300,000.00 | 191,417.20 | 14.72% |
| Առողջապահություն (այլ դասերին չպատկանող) | 7 | 6 | 2 | 100,000.00 | 0.00 | 0.00% |
| Գրադարաններ | 8 | 2 | 1 | 1,100,000.00 | 270,000.00 | 24.55% |
| Այլ մշակութային կազմակերպություններ | 8 | 2 | 4 | 1,250,000.00 | 270,000.00 | 21.60% |
| Նախադպրոցական կրթություն | 9 | 1 | 1 | 3,330,500.00 | 352,800.00 | 10.59% |
| Կրթություն (այլ դասերին չպատկանող) | 9 | 8 | 1 | 150,000.00 | 0.00 | 0.00% |
| Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 10 | 7 | 1 | 820,000.00 | 150,000.00 | 18.29% |
| ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 11 | 1 | 2 | 1,800,000.00 | 0.00 | 0.00% |

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով

Առաջատար մասնագետ /հաշվապահ/ Հ. Թադևոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 ապրիլի 2020թվականի N 9

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 2020 թվականի մարտի 12-ի հանրային լսումների արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Նպատակահարմար համարել համայնքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2020 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ սահմանված կարգով Արարատի մարզպետարան ներկայացնել Դիմիտրովի համայնքապետարանի հոսանքի 24.6 ԿՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային կայանի տեղադրման աշխատանքների ծրագրի սուբվենցիայի ամբողջական փաթեթը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԻՎԱՆՈՎԱ ԻՐԴԱ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ